



ՄՈՒԾԵԴ ՀԱԿՈԲՅԱՆ  
ՀՊՏՀ տնտեսագիտության տեսության  
ամբիոնի ղոցենստ,  
տնտեսագիտության թեկնածու

## ՀԱՐԿԱԲՅՈՒՁԵՏԱՅԻՆ ԿԱՅՈՒՆՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐԸ

Հարկաբյուջետային կայունությունը, որպես մակրոտնտեսական իրավիճակը բնութագրող կարևոր ցուցանիշ, կարելի է քննարկել տնտեսական քաղաքականության համատեքստում: Այն ծևավորվում է հարկաբյուջետային քաղաքականության ազդեցությամբ: Եթե դրամավարկային քաղաքականության նպատակը հավասարակշռության ստեղծումն է, ապա հարկաբյուջետային քաղաքականության առաջնային խնդիրը կայունության ապահովումն է: Դրամավարկային և հարկաբյուջետային քաղաքականությունների համակցումը մեծացնում է տնտեսության պետական կարգավորման արդյունավետությունը՝ նպաստելով կայուն և հավասարակշռված տնտեսական աճին: Հարկաբյուջետային կայունության համակարգի հիմնական տարրը պետական պարտքի մակարդակն է, որն արտացոլվում է գնահատման տարբեր մոդելներում: Հարկաբյուջետային կայունությունը կարելի է քննարկել ինչպես կարձաժամկետ, այնպես էլ երկարաժամկետ հատվածներում:

Հարկաբյուջետային կայունությունը կարձաժամկետ հատվածում սահմանվում է որպես չաճող պարտք/ՀՆԱ հարաբերակցություն (net increasing debt to GDP ratio)<sup>1</sup> ապահովող միջոցառումների համակարգ: Այս ցուցանիշն արտացոլում է կայունության նախապայմաններից կարձաժամկետ հատվածում հարկաբյուջետային կայունության շեղման աստիճանը<sup>2</sup>: Կարձաժամկետ

<sup>1</sup> Տե՛ս Herscell I. Grossman, John B. Van Huyck, Nominally Sovereign Debt, Risk Shifting Reputation, IMF Working Paper, 1994:

<sup>2</sup> Անհրաժեշտ է նշել, որ տվյալ ցուցանիշները կայունության սահմանման տեսանկյունից ապահովված չեն և ավելի շատ պայմանական բնույթ ունեն՝ տարաբաժանելով կայուն հարկաբյուջետային քաղաքականությունն անկայունից:

առումով պետական պարտքի աճը, ըստ էության, հանգեցնում է ամբողջական պահանջարկի խթանմանը: Կառավարության կողմից բյուջեի պակասուրդի մեծացումը ծախսերի հաստատուն մակարդակի պահպանման պարագայում ինչպես հարկային եկամուտների կրծատման, այնպես էլ դրանց անփոփոխ մնալու դեպքում ծախսերի աճի պատճառով հանգեցնում է տնային տնտեսությունների տնօրինվող ընթացիկ եկամուտների ավելացմանը: Կարձաֆամկետ հետևանքներն ուսումնասիրելիս օգտագործվում է IS-LM մոդելը<sup>3</sup>:

Երկարաժամկետ հատվածում բյուջեի պակասուրդի աճը հանգեցնում է ազգային խնայողությունների կրծատմանը: Մասնավոր հատվածի եկամուտը բաշխվում է՝  $Y=C+S+T$  ( $Y$ -ը մասնավոր հատվածի եկամուտն է,  $C$ -ն՝ սպառումը,  $S$ -ը՝ խնայողությունները,  $T$ -ն՝ հարկերը), իսկ ամբողջական եկամուտը՝ հետևյալ 4 ուղղություններով.  $Y=C+I+G+NX$  ( $I$ -ն՝ ներդրումներն են,  $G$ -ն՝ պետական գնումները,  $NX$ -ը՝ զուտ արտահանումը), այսինքն՝ մասնավոր և պետական խնայողությունների ամբողջությունը պետք է հավասար լինի ներդրումների և զուտ արտահանման գումարին՝  $S+(T-G)=I+NX$ :

Կառավարության կողմից բյուջեի պակասուրդի մեծացումը թե՛ հարկային եկամուտների կրծատման ուղիով, երբ ծախսերը հաստատուն են, թե՛ ծախսերի մեծացմամբ, երբ հարկային եկամուտներն անփոփոխ են, հանգեցնում են պետական խնայողությունների կրծատմանը: Դա կարող է ունենալ մի քանի հետևանք. մասնավոր խնայողությունները կարող են աճել, ներքին ներդրումները և զուտ ներդրումները՝ կրծատվել:

Պետական խնայողությունների կրծատումը կարող է նպաստել մասնավոր խնայողությունների աճին, որովհետև երբ կառավարությունը մեծացնում է բյուջեի պակասուրդը՝ հատկապես հարկերի կրծատման ճանապարհով, աճում է տնային տնտեսությունների տնօրինվող եկամուտը, որը ենթադրում է տնային տնտեսությունների կողմից ինչպես լրացուցիչ ծախսեր, այնպես էլ լրացուցիչ խնայողություններ: Պետական պարտքի աճը ենթադրում է նաև պետական արժեթղթերի նոր թողարկումներ, որոնք նույնպես կարող են մասնավոր հատվածի համար լրացուցիչ եկամտի և խնայողությունների աղբյուր դառնալ: Բնականաբար, խնայողությունները չեն աճի լրացուցիչ եկամտի չափով, ինչպես կարծում են պետական պարտքի մասին ռիկարդյական տեսակետի կողմնակիցները, բայց և դրանք զորոյի չեն հավասարվի, ինչպես պնդում են ավանդական տեսակետի ներկայացուցիչները<sup>4</sup>: Պետական խնայողությունների կրծատումը կուտեկցվի ոչ միայն մասնավոր խնայողությունների աճով, այլ նաև ներքին կամ զուտ արտաքին ներդրումների կրծատումներով (կամ էլ դրանց միաժամանակյա կրծատմամբ): Ներքին ներդրումների կրծատման հետևանքով որոշ ժամանակ անց կնվազի նաև ներքին կապիտալը՝ պատճառ դառնալով արտադրանքի և եկամտի կրծատման: Կաձեն կապիտալի սահմանային արդյունքը, տոկոսադրույքն ու կապիտալի յուրաքանչյուր միավորից ստացվող եկամուտը, աշխատուժի արտադրողականությունն ավելի ցածր կլիմի: Որոշ ժամանակ անց, ըստ կրծատված զուտ արտաքին ներդրումների, ռեզիլիենտները ավելի քիչ կապիտալ կունենան ար-

<sup>3</sup> Տե՛ս Bernard Laurens, Enrique de la Piedra, Coordination of Monetary and Fiscal Policies, IMF Working Paper 98/25, March, 1998, էջ 27:

<sup>4</sup> Տե՛ս Leong D., Debt Management-Theory and Practice, Treasury Occasional Paper N10, April, 2005:

տասահմանում (ոչ ռեզիդենտներն ավելի շատ ներքին կապիտալ կունենան): Երկու դեպքում էլ ռեզիդենտների գուտ կապիտալ եկամուտները կը բարձատվեն: Ավելին, գուտ արտաքին ներդրումների կրծատումը պետք է հավասարվի գուտ արտահանման կրծատմանը, որը նույնն է, ինչ՝ արտաքին առևտության հաշվեկշռի պակասուրդի մեծացումը: Այս դեպքում տնտեսությունը համարվում է կրկնակի պակասուրդային (twin deficit economy)<sup>5</sup>:

Պետական պարտատոմսերը պետական պարտքի կառավարման առավել ձկուն գործիք են, քանզի, ժամանակային առումով, պետական պարտատոմսերի տեղաբաշխման միջոցով պարտք վերցնելու հնարավորությունը զգալիորեն տարբերվում է պետական պարտք վերցնելու այլընտրանքներից: Բնականաբար, որքան փոքր է թողարկվող պարտատոմսերի ժամկետայնությունը, այնքան մեծանում է պարտատոմսերի թողարկումների հաճախականությունը: Միա հետ մեկտեղ, բյուջետային տարվա ընթացքում (կամ որևէ դիսկրետ ժամանակահատվածում) մեծանում է մարվող թողարկումների թիվը (նաև ծավալը): Ուստի, որպեսզի երկրները հարկաբյուջետային անկայունության կամ անվճարունակության խնդրի առջև չկանգնեն, երբ ինչ-ինչ պատճառներով պարտքի մարումը նոր պարտքի առաջացման հաշվին կատարելու հնարավորությունը բացառվի կամ խիստ սահմանափակվի, որի հավանականությունը հավասար չէ գրոյի զարգացող երկրներում (այդ թվում նաև ՀՀ-ում), կարծածամկետ և միջնաժամկետ ներքին պարտքը պետք է սահմանափակվի այնպես, որ հնարավոր լինի կատարել բյուջեի՝ պաշտպանված հոդվածներով նախատեսված ծախսերը, ինչպես նաև պարտքային պարտավորություններից բխող վճարումները: Ելնելով վերոգրյալից՝ կարող ենք սահմանել այնպիսի N<sub>op</sub> ցուցանիշ, որը կբացահայտի երկրի ներքին պարտք վերցնելու առավելագույն չափը, որի դեպքում երկրի հարկաբյուջետային կայունությունն ու վճարունակությունը չեն խիստվի.

$$N = \frac{D}{T},$$

որտեղ՝ D-ն երկրի միջին օրական ներքին պարտքն է, հավասար է ներքին պարտքի և պարտատոմսի միջին ժամկետայնության հարաբերությանը,

T-ն՝ բյուջեի միջին օրական հարկային եկամուտը:

Որպեսզի երկրում հարկաբյուջետային կայունությունը պահպանվի, պետք է.

$$D \leq T \times (1 - a - c) + b \times D$$

$$N_{op} = \frac{D}{T} \leq \frac{1 - a - c}{1 - b},$$

որտեղ՝ a-ն բյուջեի պաշտպանված ծախսերի միջին օրական ցուցանիշի և միջին օրական հարկային եկամուտների հարաբերությունն է,

c-ն՝ երկրի կենսագործունեության համար անհրաժեշտ միջին օրական ծախսերի և միջին օրական հարկային եկամուտների հարաբերությունը,

b-ն՝ միջին օրական ներքին պարտքի այն մասը, որը երկրները ցանկանում են կամ հնարավորություն ունեն վերածնակերպելու<sup>6</sup>:

<sup>5</sup> Տես Velasco A., Debts and deficits with fragmented fiscal policymaking, IMF Working Paper, 2007, էջ 19:

<sup>6</sup> Տես Vito T., Fiscal Deficit Measurement, Washington, IMF, 1993:

Հարկաբյուջետային կայունությունը գնահատելիս շատ դեպքերում որպես հիմք է ընդունվում «ներկայացուցչական գործակալի» (representative agent) մոդելը<sup>7</sup>, ըստ որի կառավարությունը պետք է ապահովի և միջժամանակային բյուջետային սահմանափակումը, և կայուն բյուջեի սահմանափակումը յուրաքանչյուր փուլում: Քանի որ երկրի կառավարության պարտքը հաջորդ փուլում հավասար կլինի տվյալ փուլի սկզբում կառավարության պարտքի, նոյն փուլի բյուջեի առաջնային պակասուրդի (բյուջեի պակասուրդը՝ առանց տոկոսավճարների), այդ փուլի տոկոսավճարների գումարին, ապա կայուն բյուջեի սահմանափակումը կարելի է գրել հետևյալ կերպ:

$$B_{t+1} = R_t \times B_t + D_t,$$

որտեղ՝  $B_t$ -ն կառավարության պարտքն է փուլի սկզբում,

$R_t = 1 + r_t - d_t$ ՝ գեղչի գործոն, որը կիրառվում է  $t$  և  $t+1$  փուլերի միջև ընկած ժամանակահատվածում,

$D_t$ -ն՝ այդ փուլի առաջնային պակասուրդը:

Զեափոխելով կայուն բյուջեի սահմանափակումը՝ կստանանք միջժամանակային բյուջետային սահմանափակումը.

$$B_t = - \sum_{j=0}^{\infty} R(t, t+j)^{-1} \times D_{t+j} + \lim_{T \rightarrow \infty} R(t, t+T)^{-1} \times B_{t+T+1},$$

որտեղ՝  $R(t, t+j) = \prod_{k=0}^j R_{t+k}$  -ն գեղչի գործոնն է, որը կիրառվում է  $t$  և  $t+j$  փուլերի միջև ընկած ժամանակահատվածում.

$$B_t = -R_{t-1} \times D_t + R_{t-1} \times B_{t+1}$$

Եթե տվյալ փուլի առաջնային պակասուրդի գուտ ներկա արժեքը նշանակենք  $d_t$ -ով, նյուտ փուլինը՝  $d_{t+1}$ -ով, ապա.

$$d_t = D_t$$

$$d_{t+1} = D_{t+1} \times (1+r_{t+1}) - 1$$

$$d_{t+j} = D_{t+j} \times (1+r_{t+1}) - 1 \times (1+r_{t+2}) - 1 \times \dots \times (1+r_{t+j}) - 1$$

$$\sum_{j=0}^{\infty} d_{t+j} = \sum_{j=0}^{\infty} \left( D_{t+j} \times \prod_{k=0}^{j-1} (1+r_{t+k})^{-1} \right)$$

Եթե  $1+r_{t+k}$ -ն նշանակենք  $R_{t+k}$ -ով և  $\prod_{k=0}^j R_{t+k}^{-1} = R(t, t+j)^{-1}$ , ապա ապագա  $j$  փուլերի առաջնային պակասուրդների գուտ ներկա արժեքների գումարը՝

$$\sum_{j=0}^{\infty} d_{t+j} = \sum_{j=0}^{\infty} R(t, t+j)^{-1} \times D_{t+j}$$

Ցանկացած  $T+1$  պահի պարտքի գուտ ներկա արժեքը հավասար կլինի<sup>8</sup>.

$$b_{t+T+1} = \lim_{T \rightarrow \infty} R(t, t+T)^{-1} \times B_{t+T+1} = 0$$

Ըստ միջժամանակային բյուջետային սահմանափակման հավասարման՝ ապագա առաջնային գուտ ներկա արժեքը պետք է գերազանցի առաջնային պակասուրդների գուտ ներկա արժեքը բավարար գումարով՝ ծածկելու սկզբնական և վերջնական պարտքերի գուտ ներկա արժեքների տարբե-

<sup>7</sup>Տես Chalk N. and Hemming R., Assessing fiscal sustainability in theory and practice, IMF Working Paper, 2000:

<sup>8</sup>Տես նոյն տեղը:

րությունը, որպեսզի ապահովվի կայունությունը կամ կառավարության վճարումակությունը (բյուջետային սահմանափակում): Եթե պետությունն ամեն փուլում նոր պարտք վերցնի հինգ մարելու և տոկոսավճարները վճարելու նպատակով, այսինքն՝ պարտքն աճի տոկոսավճարների չափով, ապա այսպիսի հրավիճակը, որոշակի դեպքում, կհամարվի անկայուն հատկապես այն երկրների համար, որոնք պարտք են վերցնում սահմանափակ թվով գործակալներն որովհետև հավանականությունն այն բանի, որ այդ գործակալներն անընդհատ կվարկավորեն, 100%-անոց չէ: Այդպիսին կարող են համարվել այն երկրները, որոնց պարտքի գերակշիր մասը ծևավորվում է պետական արժեթղթերի ներքին շուկայում առաջնային տեղաբաշխումից կամ էլ արտաքին սահմանափակ թվով աղբյուրներից: Այդպիսի երկրներում պետական պարտքը (որա ազդեցությունը տնտեսության վրա) կայուն կարելի է զնահատել հետևյալ սահմանափակման պարագայում:

$$\lim_{T \rightarrow \infty} R(t, t+T)^{-1} \times B_{t+T+1} \leq 0,$$

այսինքն՝ պարտքը պետք է աճի ոչ ավելի, քան տոկոսավճարներն են:

Մրա մասնավոր դեպքում, եթե  $\lim_{T \rightarrow \infty} R(t, t+T)^{-1} \times B_{t+T+1} = 0$  (հատող պայման)<sup>9</sup>, այսինքն՝ պարտքն աճում է տոկոսավճարների չափով, բյուջետային սահմանափակման ներկա արժեքը կարելի է գրել.

$$B_t = - \sum_{j=0}^{\infty} R(t, t+j)^{-1} \times D_{t+j}$$

Հատող պայմանը պարզապես սահմանափակում է պարտքը՝ աճել ոչ ավելի արագ, քան տոկոսավճարներն են: Սակայն դա կայունության բավարար պայման չէ: Եթե շարունակվող փուլերում պարտքի միջին տոկոսադրույթը բարձր է տնտեսական աճի տեմպից, ապա պարտքը կարող է աճել ավելի արագ, քան կզարգանա տնտեսությունը, իսկ պարտք/ՀՆԱ հարաբերություններից ավելի մեծ առաջնային հավելուրդ ստանալ: Ուստի՝  $-D_{t+j} < \alpha \times Y_{t+j}$ , որտեղ՝  $-D_{t+j}$  ն հավելուրդն է,  $Y_{t+j}$ ՝  $\text{ՀՆԱ}$  ն,  $\alpha < 1$ -ը՝ գործակիցը:

Տեղադրելով միջժամանակային բյուջետային սահմանափակման բանաձևում՝ կստանանք.

$$B_t < \sum_{j=0}^{\infty} R(t, t+j)^{-1} \times \alpha \times Y_{t+j}$$

Սա կայունության անհրաժեշտ պայման է, ըստ որի, երկրում հարկաբյուջետային կայունության պահպանման համար, ցանկացած պահի պետական պարտքի ծավալը պետք է փոքր լինի ապագա հնարավոր առավելագույն բյուջեի առաջնային հավելուրդների ներկա արժեքների գումարից: Այսպիսով՝

- Եթե պարտքի միջին տոկոսադրույթը բարձր է տնտեսական աճի տեմպից, ապա պարտք/ՀՆԱ հարաբերությունը պետք է սահմանափակվի հարկաբյուջետային կայունության պահպանման նպատակով:

<sup>9</sup> Տես Blejer Mario L., Cheasty Adrienne, How to measure the fiscal deficit, Washington, IMF, 2003, էջ 13:

- Եթե մշտական առաջնային պակասուրդն անհամատեղելի է տնտեսական կայունության հետ, ապա մշտական ամբողջ պակասուրդն ու տնտեսական կայունությունը որոշ դեպքերում կարող են համատեղելի լինել: Սա կլինի այն դեպքում, երբ երկիրը յուրաքանչյուր փուլում ունենա փոքր առաջնային հավելուրդ՝ ծածկելու պարտքի տոկոսային վճարների մի մասը: Համախառն պակասուրդի պայմաններում պարտքը կազի ավելի դանդաղ, քան տոկոսավճարներն են, և պարտքի ազդեցությունը կգնահատվի կայուն՝ դրանով բավարարելով հասող պայմանը:
- Պարտքի ազդեցությունը կգնահատվի անկայուն, եթե դա աճում է ավելի արագ, քան տոկոսավճարներն են, նույնիսկ այն դեպքում, երբ տնտեսական աճը գերազանցում է պարտքի միջին տոկոսը, և պարտք/ՀՆԱ հարաբերությունը փոքրանում է:

Պետք է նշել, որ միայն բյուջեի սահմանափակման ներկա արժեքի վրա հիմնված կայունության գնահատականը թերի կլինի, որովհետև հաշվի կառնվեն միայն մի քանի տնտեսական փոփոխականներ՝ կառավարության պարտք, պարտքի միջին տոկոս, նախատեսված առաջնային հավելուրդ և պակասուրդ: Ուստի հարկ է հիմնվել ավելի մեծ թվով տնտեսական փոփոխականների վրա և փորձել կայունությունը գնահատել օգտվելով կայունության ինդիկատորներից, որոնք ցույց են տալիս, թե ինչքան է հարկաբյուջետային քաղաքականությունը հեռանում կայունությունից:

Հարկաբյուջետային կայունության գնահատման այլպիսի գործիքներից է երկրի զուտ հարստության (պետական ակտիվներ՝ հանած պարտավորություններ) և ՀՆԱ հարաբերության կայունության ցուցանիշը: Գործիքի էությունն այն է, որ հաշվարկվում է զուտ հարստություն/ՀՆԱ հարաբերությունը հաստատուն պահելու համար անհրաժեշտ առաջնային պակասուրդը (արտահայտված ՀՆԱ տոկոսով), որը համեմատվում է փաստացի ընթացիկ առաջնային պակասուրդի հետ՝ այդպիսով գնահատելով հարկաբյուջետային քաղաքականության կայունությունը<sup>10</sup>.

$$\bar{d} = (r_t - n_t) \times w_t,$$

որտեղ՝  $\bar{d} = D_t / Y_t$ -ն զուտ հարստություն/ՀՆԱ հարաբերությունը հաստատուն պահելու համար անհրաժեշտ առաջնային պակասուրդն է՝ արտահայտված ՀՆԱ տոկոսով ( $D_t$ -ն առաջնային պակասուրդն է,  $Y_t$ -ն՝ ՀՆԱ-ն),

$r_t$ -ն՝ զուտ հարստությունից ստացվող միջին տոկոսադրությը,

$n_t$ -ն՝ տնտեսական աճի տոկոսը,

$w_t = W_t / Y_t$ -ն՝ երկրի զուտ հարստության և ՀՆԱ հարաբերությունը:

Հարկաբյուջետային կայունության գնահատման գործիքը կլինի՝

$$\bar{d} - d_t = (r_t - n_t) \times w_t - d_t,$$

որը հաստատուն հարստության (արտահայտված ՀՆԱ տոկոսով) առաջնային և փաստացի ընթացիկ առաջնային պակասուրդների տարբերությունն է: Բացասական արժեքը վկայում է, որ ընթացիկ առաջնային պակասուրդը չափազանց մեծ է զուտ հարստության և ՀՆԱ հարաբերությունը կայունաց-

<sup>10</sup> Տե՛ս Nigel Chalk and Richard Hemming, Assessing fiscal sustainability in theory and practice, IMF Working Paper, 2000:

նելու համար, ուստի երկրի վարած հարկաբյուջետային քաղաքականությունը պետք է գնահատվի անկայուն:

Հարկաբյուջետային կայունության գնահատման հաջորդ գործիքը առաջնային ձեղքի ցուցիչն է: Այսուել ելակետային է այն զաղափարը, որ կայուն հարկաբյուջետային քաղաքականության դեպքում երկրի պետական պարտքի և ՀՆԱ հարաբերությունը պետք է հաստատուն մնա: Ըստ այդմ՝ հաշվարկվում է պետական պարտք/ՀՆԱ հարաբերությունը հաստատուն պահելու համար անհրաժեշտ առաջնային պակասուրդը (արտահայտված ՀՆԱ տոկոսով), ապա դա համեմատվում է ընթացիկ առաջնային պակասուրդի հետ՝ գնահատելով երկրի հարկաբյուջետային քաղաքականության կայունությունը.

$$\bar{d} = (n_t - r_t) \times b_t,$$

որտեղ՝  $\bar{d} = D_t / Y_t$  -ն պետական պարտք/ՀՆԱ հարաբերությունը հաստատուն պահելու համար անհրաժեշտ առաջնային պակասուրդն է՝ արտահայտված ՀՆԱ տոկոսով ( $D_t$  -ն առաջնային պակասուրդն է,  $Y_t$  -ն՝ ՀՆԱ-ն),

$r_t$  -ն՝ պետական պարտքի միջին տոկոսադրույթը,  
 $n_t$  -ն՝ տնտեսական աճի տոկոսը,

$b_t = B_t / Y_t$  -ն՝ երկրի պետական պարտքի և ՀՆԱ հարաբերությունը:

Ըստ հավասարման՝ երբ տնտեսական աճը գերազանցում է պարտքի միջին տոկոսադրույթը, այսինքն՝ տնտեսությունն աճում է ավելի արագ, քան տոկոսավճարների չափով աճող պարտքը (Երբ առաջնային պակասուրդը՝  $D=0$ ), բյուջեն պետք է ունենա համապատասխան չափով առաջնային պակասուրդ, որպեսզի պարտքի որոշ աճի միջոցով հաստատուն պահվի պետական պարտք/ՀՆԱ հարաբերությունը, իսկ երկիրը հնարավորություն ստանա առանց հարկաբյուջետային կայունությունը խաթարելու, պետական պարտքի աճի հաշվին, նոր ներդրումներ կատարելու: Եվ ընդհակարակը՝ երբ տնտեսական աճի տոկոսն ավելի փոքր է պարտքի միջին տոկոսադրույթից, բյուջեն պետք է որոշ առաջնային հավելուրդ ունենա, որպեսզի պարտքի աճը սահմանափակվի և պետական պարտք/ՀՆԱ հարաբերությունը մնա հաստատուն:

Հարկաբյուջետային կայունության գնահատման առաջնային ձեղքի ցուցիչը կիහնի:

$$\bar{d} - d_t = (n_t - r_t) \times b_t - d_t,$$

որը հաստատուն պարտքի (ՀՆԱ տոկոսով արտահայտված) առաջնային պակասուրդի և ընթացիկ առաջնային պակասուրդի տարբերությունն է: Ինդիկատորի բացասական կամ դրական արժեքները փաստում են, որ ընթացիկ առաջնային պակասուրդը, համապատասխանաբար, չափազանց մեծ է կամ չափազանց փոքր՝ կայունացնելու պարտքի հարաբերությունը, ուստի երկրի վարած հարկաբյուջետային քաղաքականությունը պետք է գնահատվի անկայուն:

Հարկաբյուջետային կայունության գնահատման հաջորդ գործիքը հարկային ձեղքի ցուցիչն է: Այս դեպքում նախ հաշվարկվում է պարտք/ՀՆԱ հարաբերությունը հաստատուն պահելու համար անհրաժեշտ առաջնային պակասուրդը (ՀՆԱ տոկոսով արտահայտված), այնուհետև կառավարության ոչ տոկոսային ծախսերի (ՀՆԱ տոկոսով արտահայտված) և հաստատուն

պարտքի առաջնային պակասուրդի (*ՀՆԱ տոկոսով արտահայտված*) տարբերությամբ հաշվարկվում է անհրաժեշտ հարկային եկամուտներ/*ՀՆԱ հարաբերությունը*, որն էլ համեմատվում է ընթացիկ (փաստացի) հարկային եկամուտներ/*ՀՆԱ հարաբերության հետ՝ գնահատելով երկրի հարկաբյուջետային կայունությունը*<sup>11</sup>.

$$\bar{t} = g_t - \bar{d} = g_t - (n_t - r_t) \times b_t,$$

որտեղ՝  $g_t = D_t / Y_t$  -ն կառավարության ոչ տոկոսային ծախսերի և *ՀՆԱ հարաբերությունն* է,

$\bar{t}$  -ն՝ հաստատուն պարտք/*ՀՆԱ հարաբերության դեպքում անհրաժեշտ կայուն հարկային եկամուտներ/*ՀՆԱ հարաբերությունը*:*

Ըստ հավասարման՝ անհրաժեշտ կայուն հարկային եկամուտներ/*ՀՆԱ հարաբերությունը որոշվում է կառավարության ծախսային քաղաքականությամբ և պարտք/*ՀՆԱ հարաբերության հաստատուն մնալու համար անհրաժեշտ առաջնային պակասուրդով*: Որքան տնտեսական աճի տեմպը գերազանցում է պարտքի միջին տոկոսադրույթը, այնքան հարկային եկամուտներ/*ՀՆԱ հարաբերությունը կարող է փոքր լինել, և ընդհակառակը*:*

*Հարկաբյուջետային կայունության գնահատման հարկային ձեղքի ցուցը կլինի.*

$$t_t - \bar{t} = t_t - g_t + (n_t - r_t) \times b_t,$$

որն ընթացիկ հարկային եկամուտներ/*ՀՆԱ հարաբերության և հաստատուն պարտք/*ՀՆԱ հարաբերության դեպքում անհրաժեշտ հարկային եկամուտներ/*ՀՆԱ կայուն հարաբերության տարբերությունն* է: Այս ցուցի բացասական արժեքն արձանագրում է, որ ընթացիկ հարկերը չափազանց փոքր են՝ կայունացնելու պարտք/*ՀՆԱ հարաբերությունը համապատասխան ընթացիկ ծախսերի քաղաքականությամբ, ուստի հարկաբյուջետային քաղաքականությունը կզնահատվի անկայուն:* Առաջնային ձեղքի և հարկային ձեղքի ցուցիչներն, ըստ էլեկտրական նույն են, սակայն տարբերվում են իրենց շեշտադրումներով: Եթե առաջնային ձեղքի ցուցիչը պարտք/*ՀՆԱ հարաբերության կայունությանը հասնում էր առաջնային պակասուրդի փոփոխման միջոցով, ապա հարկային ձեղքի ինդիկատորը՝ հարկային եկամուտներ/*ՀՆԱ հարաբերության փոփոխությամբ՝ ըստ ընթացիկ ծախսերի համապատասխան քաղաքականության:****

*Հարկաբյուջետային կայունության գնահատման համար կարելի է օգտագործել նաև միջնաժամկետ հարկային ձեղքի ցուցիչը, որն ընթացիկ հարկային եկամուտներ/*ՀՆԱ հարաբերության և հաջորդ N տարիների պարտք/*ՀՆԱ հարաբերությունը կայունացնելու համար անհրաժեշտ հարկային եկամուտներ/*ՀՆԱ հարաբերության տարբերությունն* է: Քանի որ դժվար է կանխատեսել առաջիկա տարիների տնտեսական աճի և պարտքի միջև տոկոսադրույթների փոփոխությունները, դրանք դիտարկվում են հաստատուն*<sup>12</sup>:**

*Պարտք/*ՀՆԱ հարաբերությունը կայունացնող հարկային եկամուտներ/*ՀՆԱ հարաբերությունը կլինի.***

$$\bar{t} = \frac{1}{N} \sum_{j=0}^N (g_{t+j} - (n_{t+j} - r_{t+j}) \times b_{t+j}) = \frac{1}{N} \sum_{j=0}^N g_{t+j} - (n_t - r_t) \times b_t,$$

<sup>11</sup> Տե՛ս Nigel Chalk and Richard Hemming, նշվ. աշխ.:

<sup>12</sup> Տե՛ս Herschell I. Grossman, John B. Van Huyck, նշվ. աշխ., 1994:

իսկ միջնաժամկետ հարկային ճեղքի ցուցիչը.

$$t_t - \bar{t} = t_t - \frac{1}{N} \sum_{j=0}^N g_{t+j} + (n_t - r_t) \times b_t$$

Դա որոշում է, թե հարկային եկամուտ/ՀՆԱ հարաբերությունը որքան պետք է աճի հաջորդ N տարիներին՝ կայունացնելու համար պարտք/ՀՆԱ հարաբերությունը՝ ընթացիկ և ապագայում ակնկալվող ծախսերի քաղաքականությունը կայուն գնահատելու համար պարտադիր չէ, որ պարտք/ՀՆԱ հարաբերությունը սահմանափակվի՝ մնա կայուն: Ավելին, այն երկրի համար, որն ունի մեծ պարտք կամ փոքր զուտ հարստություն, կայուն հարկաբյուջետային քաղաքականության նպատակը կարող է լինել պարտք/ՀՆԱ նվազումը կամ զուտ հարստություն/ՀՆԱ հարաբերության աճը: Իսկ այն երկրների համար, որոնք ունեն փոքր պարտք կամ մեծ զուտ հարստություն, հարկաբյուջետային քաղաքականությունը կարող է կայուն լինել, նույնիսկ եթե հանգեցնում է պարտքի աճի կամ ավելի ցածր զուտ հարստության: Որպես հետևանք՝ կարելի է ասել, որ հարկաբյուջետային կայունությունը գնահատելիս պետք է ելնել երկրների առանձնահատկություններից ու մեկնարկային պայմաններից: Որոշ դեպքերում ընթացիկ քաղաքականության այլընտրանքային տարրերակ է մշակվում, ըստ որի սահմանափակվում է պարտք/ՀՆԱ հարաբերությունը: Դա նպաստում է մակրոտնտեսական իրավիճակի նախընտրելի զարգացումների և կայունության ապահովմանը ամբողջ միջին ժամանակահատվածում: Ընթացիկ քաղաքականության համաձայն, եթե պետությունը չի սահմանափակում պարտք/ՀՆԱ հարաբերության փոփոխությունը, ապագա պարտք/ՀՆԱ հարաբերությունը կարելի է հաշվել հետևյալ կերպ:

$$b_{t+i+1} = \sum_{k=1}^{i+1} \delta(t+k, t+i) \times d_{t+k-1} + \delta(t, t+i) \times b_t,$$

որտեղ՝  $b_t$ -ն պարտք/ՀՆԱ հարաբերությունն է,

$\{\bar{d}_{t+j}\}_{j=0}^i$  շարքը՝ առաջնային հաշվեկշռի (առաջնային պակասուրդ-ներն ու հավելուրդները) բազային տարրերակը,

$$\delta(t+i, t+j) = \prod_{k=i}^j \frac{R_{t+k}}{1 + n_{t+k}} - \text{և } t+i \text{ և } t+j \text{ փուլերի միջև գեղչի գործոնը՝$$

կախված տնտեսական աճից:

Փաստորեն, պարզվում է՝ ելակետային փուլից i+1 փուլ հետո պարտք/ՀՆԱ հարաբերությունը հավասար կլինի ելակետային փուլից մինչև i փուլ առաջնային պակասուրդ (հավելուրդ)/ՀՆԱ հարաբերությունների գործարին (թերված i+1 փուլի ցուցանիշների տեսքի) ավելացրած ելակետային փուլի պարտքի և i+1 փուլերի տոկոսավճարներ/ՀՆԱ հարաբերության գործարին (թերված i+1 փուլի ցուցանիշների տեսքի):

Ինչ վերաբերում է այլընտրանքային տարրերակին, որտեղ պարտք/ՀՆԱ հարաբերությունը սահմանափակվում է (մնում է հաստատուն), որն էլ, իր հերթին, միջին ժամանակահատվածում հանգեցնում է կայունության, կարելի է գրել հետևյալ հավասարումը.

$$b_t = \sum_{k=1}^{i+1} \delta(t+k, t+i) \times \bar{d}_{t+k-1} + \delta(t, t+i) \times b_t$$

$\{\bar{d}_{t+j}\}_{j=0}^i$  շարքը ներկայացնում է առաջնային հաշվեկշռի բազային տարբերակը, որը միջին ժամկետում հաստատում է պահում պարտք/ՀՆԱ հարաբերությունը:

Պետք է նշել, որ պարտք/ՀՆԱ հարաբերության կայունությունը դեռ չի նշանակում հարկաբյուջետային քաղաքականության կայունություն: Որոշ տնտեսագետներ առաջարկում են հարկաբյուջետային կայունության համելու համար պարտք/ՀՆԱ հաստատում հարաբերության փոխարեն օգտագործել ամբողջական հարկաբյուջետային հաշվեկշռվածությունը, որի հիմքում ընկած է հարկման կայուն մակարդակը, այսինքն՝ պետք է ծախսել այնքան, որքան հարկային եկամուտներ են ստացվում, կամ պետք է հավաքել այնքան հարկային եկամուտ, որպեսզի հնարավոր լինի կատարել ընթացիկ ծախսային քաղաքականությամբ սահմանված ծախսերը: Կայուն հարկային հարաբերությունը (հարկային եկամուտ/ՀՆԱ) կարելի է սահմանել.

$$\bar{t} = g_t + r_t \times b_t,$$

որը ենթադրում է՝  $(1+n_t) \times b_t + 1 = b_t$ , կամ, որ նույնն է՝  $B_t+1 = B_t^{13}$ :

Միջնաժամկետ հարկային ձեղքը, ամբողջ հարկաբյուջետային հաշվեկշռի կայունության սահմանմամբ, ենթադրում է հաստատուն տոկոսադրություններ ու տնտեսական աճ և ներկայացվում է հետևյալ կերպ:

$$t_t - \bar{t} = t_t - \frac{1}{N} \sum_{i=0}^N g_{t+i} - \frac{1}{N} \sum_{i=0}^N r_{t+i} \times b_{t+i} = t_t - \frac{1}{N} \sum_{i=0}^N g_{t+i} - \left( \frac{1}{N} \sum_{i=0}^N \frac{r_t}{(1+n_t)^i} \right) \times b_t$$

,  
որտեղ՝  $t_t$  – ն հարկային եկամուտ/ՀՆԱ հարաբերությունն է,

$N$  – ը՝ տարիների թիվը,

$\sum_{i=0}^N g_{t+i}$  – ն՝ ապագա  $N$  տարիներին նախատեսված ոչ տոկոսային ծախսեր/ՀՆԱ հարաբերությունը,

$r_t$  – ն՝ պարտքի միջին տոկոսադրությունը,

$b_t$  – ն՝ պարտք/ՀՆԱ հարաբերությունը,

$n_t$  – ն՝ տնտեսական աճի տոկոսը:

Պետական պարտքը ոչ միայն հարկաբյուջետային կայունության գնահատման արդյունավետ միջոց է, այլ նաև արտաքին կայունությունը գնահատելու եղանակներից մեկը: Միայն այս դեպքում վերլուծության համար օգտագործվում են արտաքին պարտքը կամ զուտ արտաքին պարտավորությունները: Եթե դիտարկենք արտաքին կայունության տեսանկյունից, ապա կարող ենք ասել, որ երկրի զուտ արտաքին պարտավորությունները հաջորդ փուլում կախված են այս փուլի զուտ արտաքին պարտավորություններից և առևտրային հաշվեկշռից:

$$e_t \times F_{t+1} = R_t^* \times e_t \times F_t - TB_t,$$

որտեղ՝  $F_t$  – ն երկրի զուտ արտաքին պարտավորություններն են,

$TB_t$  – ն՝ երկրի առևտրային հաշվեկշռը,

$R_t^* = 1 + r_t^*$  – ն՝ միջազգային տոկոսային գործոնը,

$e_t$  – ն՝ երկրի արժույթի միջին իրական cross կուրսը<sup>14</sup>:

<sup>13</sup>Տես Tanzi Vito, Fiscal Deficit Measurement, Washington, IMF, 1993:

Որքան մեծ է առևտրային հաշվեկշիռը, կամ որքան փոքր է համաշխարհային տոկոսադրույթը (կամ արտաքին պարտքի միջին տոկոսադրույթը), այնքան երկիր արտաքին տնտեսական քաղաքականությունը կայուն կզնահատվի: Արտաքին կայունության տեսանկյունից՝ նպատակահարմար չէ լողացող տոկոսադրույթով վարկեր վերցնելը, քանի որ այդ դեպքում երկրի արտաքին կայունության կախվածությունը համաշխարհային տնտեսական գործընթացներից զգալիորեն կմեծանա: Այս հավասարումն, ըստ Էության, երկրի կայունության արտաքին սահմանափակումն է: Հաշվի առնելով նաև ժամանակի գործում՝ կարելի է գրել երկրի միջժամանակային արտաքին սահմանափակումը.

$$F_t = \sum_{j=0}^{\infty} R^*(t, t+j)^{-1} \times TB_{t+j} + \lim_{T \rightarrow \infty} R^*(t, t+j)^{-1} \times e_{t+T} \times F_{t+T+1},$$

$$\text{որտեղ՝ } R^*(t, t+j) = \left( \prod_{k=0}^j R^*_{t+k} \right) \times e_{t+j}$$

Հավասարումից հետևում է, որ առևտրային հաշվեկշիռի ապագա ավելցուկները գուտ ներկա արժեքով պետք է գերազանցեն առևտրային հաշվեկշիռի ապագա պակասուրդներին գուտ ներկա արժեքի բավարար գումարով, որպեսզի ապահովվի արտաքին կայունությունը (արտաքին սահմանափակում): Սա նման է բյուջետային սահմանափակմանը: Երկիրը չի կարող շարունակաբար սպասարկել իր արտաքին պարտքը՝ արտասահմանից նոր պարտք վերցնելով: Ուստի այստեղ ևս գործում է հատող պայմանը՝

$$\lim_{T \rightarrow \infty} R^*(t, t+j)^{-1} \times e_{t+T} \times F_{t+T-1} \leq 0,$$

այսինքն՝ երկրի գուտ արտաքին պարտավորություններն աճում են տոկոսավճարների չափով կամ դրանից քիչ: Մրա մասնավոր դեպքում, եթե  $\lim_{T \rightarrow \infty} R^*(t, t+j)^{-1} \times e_{t+T} \times F_{t+T-1} = 0$ , կարելի է գրել.

$$F_t = \sum_{j=0}^{\infty} R^*(t, t+j)^{-1} \times TB_{t+j}$$

Սա նշանակում է՝ երկրի գուտ արտաքին պարտավորությունները կայուն են, եթե կան բավական մեծ ապագա առևտրային ավելցուկներ (ներկա արժեքով)` սպասարկելու գուտ արտաքին պարտավորությունները: Արտաքին կայունության գնահատման համար կարելի է օգտագործել գուտ արտաքին պարտավորություններ/ՀՆԱ հարաբերությունը.

$$(1 + q_t)(1 + n_t)f_{t+1} = R_t^* \times f_t - tb_t,$$

որտեղ՝  $f_t$ -ն գուտ արտաքին պարտավորություններ/ՀՆԱ հարաբերությունն է,

$tb_t$  - ն՝ առևտրային հաշվեկշիռ/ՀՆԱ հարաբերությունը,

$n_t$  - ն՝ տնտեսական աճի տոկոսը,

$q_t$  - ն ազգային արժույթի իրական փոխարժեքի փոփոխությունը:

Փաստորեն, գուտ արտաքին պարտավորություններ/ՀՆԱ հարաբերությունը կախված է առևտրային հաշվեկշիռից, տնտեսական աճի տոկոսից, ազգային արժույթի իրական փոխանակային կուրսի փոփոխությունից, ինչպես նաև համաշխարհային տոկոսադրույթից.

<sup>14</sup>Տես Bernard Laurens, Enrique de la Piedra, նշվ. աշխ., էջ 27:

$$f_t = \frac{tb_t}{r_t^* - q_t - n_t} = \bar{f},$$

որտեղ՝  $\bar{f}$  -ը զուտ արտաքին պարտավորություններ/ՀՆԱ հաստատուն հարաբերությունն է:

Եթե  $f_t > \bar{f}$ , զուտ արտաքին պարտավորությունները ժամանակի ընթացքում կաձեն ՀՆԱ-ի համեմատությամբ, որը կարող է հանգեցնել արտաքին կայունության բոլացման կամ անկայունության:

Հաշվի առնելով այն պյամանը, որ առևտրային ավելցուկները չեն կարող գերազանցել արտահանման  $\phi$  մասը ( $TB_t < \phi \times X_t$ , որտեղ  $0 < \phi < 1$ ), կարելի է գրել՝ եթե.

$$\frac{F_t}{X_t} > \frac{\phi}{r_t^* - q_t - n_t},$$

զուտ արտաքին պարտավորությունները կլինեն անկայում<sup>15</sup>:

Հարկաբյուջետային և արտաքին կայունությունների միջև անմիջական ուղղակի կապ չկա: Սակայն հարկաբյուջետային և արտաքին կայունություններն ամկախ չեն.

$$TB_t = -D_t + S_t - I_t,$$

որտեղ՝  $S_t$ -ն մասնավոր խնայողություններն են,

$I_t$ -ն՝ մասնավոր ներդրումները:

Այս նույնությունը ստացվում է  $Y = C + I + X$  և  $Y = C_p + S_p + T + IM$  հավասարումներից: Նույնությունը, ըստ միջժամանակային հատվածի (ապագա բոլոր փուլերի համար զուտ ներկա արժեքով գումարելով), կարող ենք գրել հետևյալ կերպ:

$$e_t \times \sum_{j=0}^{\infty} R^*(t, t+j)^{-1} \times TB_{t+j} = -\sum_{j=0}^{\infty} R^*(t, t+j)^{-1} \times D_{t+j} + \sum_{j=0}^{\infty} R(t, t+j)^{-1} \times (S_{t+j} - I_{t+j})$$

Եթե երկրում կա և հարկաբյուջետային, և արտաքին կայունություն, ապա.  $e_t \times F_t = B_t + \sum_{j=0}^{\infty} R(t, t+j)^{-1} \times (S_{t+j} - I_{t+j})$ ,

որից բխում է՝ եթե զուտ արտաքին պարտավորությունները (ազգային արժույթով արտահայտված) ավելի մեծ են, քան կառավարության պարտքը, ապա մասնավոր խնայողությունները կգերազանցեն մասնավոր ներդրումները (զուտ ներկա արժեքով) ծածկելու ապագա արտաքին պարտքի սպասարկումը:

Եթե կա հարկաբյուջետային կայունություն, բայց արտաքին դիրքն անկայուն է, ապա.

$$e_t \times F_t = B_t + \sum_{j=0}^{\infty} R(t, t+j)^{-1} \times (S_{t+j} - I_{t+j}) + \lim_{T \rightarrow \infty} R^*(t, t+T)^{-1} \times e_{t+T} \times F_{t+T+1},$$

ըստ որի՝ մասնավոր խնայողություններն անբավարար են ծածկելու արտաքին պարտքի սպասարկումը: Հետևաբար՝ ինչպես մասնավոր հատվածի,

<sup>15</sup>Տե՛ս Velasco A., նշվ. աշխ., էջ 19:

այնպես էլ կառավարության գուտ արտաքին պարտավորություններն աճում են ավելի արագ, քան արտաքին տոկոսավճարները, և մակրոտնտեսական քաղաքականության փոփոխության բացակայության դեպքում հավանական է արտաքին պարտքի սպասարկման անկարողությունը:

Վերջապես՝ եթե արտաքին դիրքը կայուն է, իսկ հարկաբյուջետայինը՝ անկայուն, ապա.

$$e_t \times F_t = B_t + \sum_{j=0}^{\infty} R(t, t+j)^{-1} \times (S_{t+j} - I_{t+j}) - \lim_{T \rightarrow \infty} R(t, t+j)^{-1} \times B_{t+T+1},$$

որը փաստում է, որ կառավարությունը ֆինանսավորում է բյուջեի չափագանց մեծ պակասուրդը՝ նոր պարտքեր վերցնելով: Ուստի անհրաժեշտ է քաղաքականության փոփոխություն, հակառակ պարագայում կառավարությունն անխուսափելիորեն կրախվի անվճարունակության խնդրին:

Այսպիսով՝ հարկաբյուջետային կայունության գնահատումը բարդ գործընթաց է, որը պայմանավորված է բազմաթիվ գործոններով: Որպես զարգացման նախապայման դիտարկելիս՝ հարկաբյուջետային կայունությունն անհրաժեշտ է գնահատել տվյալ իրավիճակից ելնելով՝ հաշվի առնելով տնտեսական քաղաքականության մարտավարությունը և ռազմավարությունը: Հարկաբյուջետային կայունությունը, որպես մակրոտնտեսական կայունության բաղկացուցիչ մաս, արտահայտում է երկրի տնտեսական անկախության և վճարունակության աստիճանը, զարգացման մակարդակը և շարժընթացը, կառավարության գործունեության արդյունավետությունը:

## МУШЕГ АКОПЯН

Доцент кафедры „Экономической теории“ АГЭУ,  
кандидат экономических наук

*Проблема оценки фискальной стабильности.*— Фискальная стабильность, как важный показатель, характеризующий макроэкономическую конъюнктуру, можно рассматривать в контексте экономической политики. Будучи конъюнктурой, она преобразуется под влиянием фискальной политики. Если цель денежно-кредитной политики - равновесие, то цель фискальной политики - стабильность. Координация денежно-кредитной и фискальной политики увелечивает эффективность государственного регулирования экономики, которое способствует устойчивому и сбалансированному экономическому росту. Основным элементом системы фискальной стабильности является уровень государственного долга, что находит свое отражение в моделях различных оценок. В этой статье рассматриваются модели оценки фискальной стабильности.

## MUSHEG NAKOBYAN

Associate Professor at the Chair of  
„Theory of Economics“ at ASUE,  
PhD in Economics

*The Issue of Assessing Fiscal Sustainability.*— Fiscal sustainability as an important indicator describing macroeconomic state can be investigated in the context of economic policy. As a state, fiscal sustainability arises under the impact of fiscal policy. The purpose of monetary policy is equilibrium, while that of the fiscal policy is sustainability. The coordination of fiscal and monetary policies enhances the efficiency of state control contributing to the stable and balanced economic growth. The main element of fiscal sustainability is the level of public debt, which is reflected in various models of assessment. The models of assessing fiscal sustainability are considered in this article.

